ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 02 >> հոկտեմբերի 2018թ. N 483 -Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 169-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի թիվ 759-Ն որոշման հավելվածի 5-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2018 թվականի ապրիլի 26-ի «Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննությունը կազմակերպող և անցկացնող պատասխանատու ստորաբաժանումներ սահմանելու, ստորաբաժանումների աշխատողների ցանկը և գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2017 թվականի օգոստոսի 3-ի թիվ 397-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 169-Ա հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված

ՀՀ ֆինանսների նախարարի

2018թ. հոկտեմբերի 2-ի N 483-Ա հրամանի

ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՑԱՆԿ

Սպարտակ Ծատինյան - ՀՀ ֆինանսների նախարարության հանրային ֆինանսների կառավարման մեթոդաբանության վարչության գնումների գործընթացի կարգավորման բաժնի գլխավոր մասնագետ (խմբի ղեկավար)

Հեղինե Ջաղինյան - ՀՀ ֆինանսների նախարարության հանրային ֆինանսների կառավարման մեթոդաբանության վարչության գնումների գործընթացի կարգավորման բաժնի գլխավոր մասնագետ

Դավիթ Գրիգորյան – ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների գործընթացի համակարգման վարչության գնման գործարքների հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ